

ԽԱՐԿՈՎ: Սպանական լուսավորման բարձր
վաճառանքում կայ մոտ հազար պոլի. կեղ-
տառ բուրդ բերված է 12,000 պոլի: Կլեյմե-
նտիկի պահեստներում բոլոր համարները
վարձված են: Սպանական է մեծ բազմություն:
ՕՐԵՍՈՎ: Մայիսի 30-ին նշանակված է նա-
հանգական դատարանում, երդուեալ դատաւոր-
ների մասնակցութեամբ, քննելու մի յայտնի
գործ, որի մէջ Պետր Մալիշեվ մեղադրվում
է աղետական ծագում ունեցող երկու կա-
նանց, Վլոդիմիրի եւ Գորիշի, սպանութեան
մէջ: Այդ յանցանքները կատարված են զանա-
զան ժամանակներում հարաւարեւմտեան եր-
կաթուղիների գնացքների առանձին կուպէ-
ներում: Մօտ հարիւր հոգի վկայ են կանչված:
Գործը կը տեւի երկու օր:

31 մայիսի

ՕՐԵՍՈՎ: Մալիշեվ խոստովանեց Սօֆիա Վո-
լոդիմիրիչին սպանելու եւ Շալոյանսկային կո-
ղտապելու փորձ անելու մէջ, իսկ Գորիշի սպա-
նութեան մէջ մասնակցութիւն ունենալը հեր-
քում է: Մալիշեվի այսպիսի խոստովանութիւնը
յետոյ, դատարանը կը բաւականապէս հարիւր
կանչված վկայներից միայն 25-ին հարցու-
փորձի ենթարկելով:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Բոկսի մասնակցութիւնը
վարձատրութեան վերաբերեալ հարցը Հաւաքա-
յի միջնորդ դատարանի վճռին յանձնելու մա-
սին՝ աչքի առաջ ունի ամբողջ հարցի լուծու-
մը: Թիւրիմացութեամբ կարծւում էր, թէ բո-
լոր պետութիւնները համաձայնութիւն կայաց-
րին իրանց մէջ 450 տեղի վրա, այն ինչ իս-
կապէս պաշտօնական տեղեկութիւններ չը կան,
որոնցից երեւար, որ բոլոր պետութիւնները
կամ նրանցից մի քանիները իսկապէս պաշ-
տօնական համաձայնութիւն կայացրած իննն
այդ հարցի վերաբերմամբ: Թէպէտ Չինաստա-
նը պարտաւորվեց վճարել 450 միլիոն տաէլ,
բայց այդ բանը տեղի ունեցած անկասկած նոյն
թիւրիմացութեան պատճառով եւ յամենայն
դէպս ի նկատի ունենալով այն ենթադրու-
թիւնը, որ նախապէս հէնց իրանց ղեկավարնե-
րի միջեւ այդ առարկայի վերաբերմամբ պաշ-
տօնական համաձայնութիւն էր կայացել: Եւ-
րոպայում տարածված դատողութիւնները, հիմն-
ված այն մտքի վրա, թէ Բոկսիի առաջարկու-
թիւնը վերաբերում է միայն վարձատրութեան
վճարման եղանակին Չինաստանի կողմից, այդ-
պիսով հիմնված են սխալ գոչակութեան վրա:

ՊՐԱԳԱ: Կայսրը ժամանեց այստեղ: Բուր-
գոմիտարի ողջոյնի ձառնի, որ նա արտասանեց
գերմաներէն եւ չեխերէն լեզուներով, կայսրը
պատասխանեց, որ չի թողնի Պրագա մայրա-
քաղաքը առանց իր ջերմ ուշադրութեան եւ
երբեք չի մոռանալ, թէ ինչպէս զարգացաւ եւ
բարձրացաւ գեղեցիկ Պրագան, չնորհիւ բնա-
կիչների անկեղծ ջանքերի վերջին տասնամակ-
ներում Հաւատարմութեամբ, թէ ինքը ջերմ հե-
տաքրքրութեամբ է վերաբերվում այն խնդր-
ներին, որոնց պէտք է Պրագան դեռ եւս լուծէ,
կայսրը գերմաներէն լեզուով շնորհակալութիւն
յայտնեց սրտազին ողջոյնի համար եւ այն հա-
մարձնեց յայտնեց, որ այդ զգացումները բա-
ժանում են թէ մայրաքաղաքի եւ թէ ամբողջ
երկրի բնակիչները: Կայսրը ցանկացաւ քաղաքին
միշտ հզօր կերպով առաջ գնալ տնտեսական եւ
կուլտուրական զարգացման ճանապարհով, մնա-
լով բոլոր բնակիչների համար միշտ հաւատարիմ
պահպան խաղաղ փոխադարձ ներգործութեան
եւ բարեկամող զարգացման: Կայսրի անցքը
գէպի Գրադչիկ նման էր յաղթական գնացքի
տօնական ձեւով զարդարված փողոցներով:

Կ. ՊՈԼԻՍ: Սուլթանը ընդունեց ռուսաց
ղեկան Զինովիեւին:

ՀԱՎԻ: Նացիոնալիստ Պարֆէ, որ մայիսի
13-ին այստեղ նարինջ նետեց Վալդէկ Բուսոյի
վրա, ուղղիչ ոստիկանութեան դատարանի
կողմից դատապարտվեց երկամեայ բանտար-
կութեան:

ՊԱՐԻԶ: Սենայի ղեկավարամէնտի ընդհանուր
խորհրդարանի նախագահ է ընտրված սօցիա-
լիստ Վէլէր. նրա ակոյցանն էր նացիոնալիստ
Գալլի:

ՊԱՐԻԶ: «Figaro»-ի բաժնետէրերի ընդհա-
նուր ժողովը, որոշելով զրկել պաշտօնից զը-
րօգէյին եւ Պէրիվիէյին, լրագրի ժամանակա-
ւոր անօրինութիւնը յանձնեց վերահսկող խոր-
հրդի նախագահ Պրէստային: Պէրիվիէ զիմա-
ղրութիւն ցոյց տուց հաշտարար դատաւորին
ու օստիկանական կոմիտարին: Կնիզեց իր
ասածի վրա, որ լրագիրը լոյս տեսնի իր ա-
նունով: Նախնական դատաւճռում ասված է,
որ Պէրիվիէյի անունը պէտք է տպվի լրագրի
ձեւագրին, մինչեւ որ յունիսի 13-ին վճիռ
կայացնէ անհետական դատարանը:

ԲԵՐԼԻՆ: Առաւօտեան լրագիրները հաղոր-
դում են, որ Վիլհելմ կայսրը երեքշաբթի
երեկոյեան այցելութիւն արեց ռուսաց նախ-
կին դեսպան կոմս Շուվալովին հիւրանոցում:
Կայսրը կէս ժամից աւելի մնաց կոմսի մօտ:
Կոմս Շուվալով հրաւիրեց ճաշի կայսերական
կանցլէրի մօտ, ուր ներկայ էր եւ ռուսաց
ղեկան Օստէն-Սակէն:

ԽՈՐՀԱՐԻՆ՝ ԱՆԻՔՍԱՆԴՐՈՍ ԳԱՆՆԱՐԻ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱՆ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԴՐ ՀԻՒՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻՍԱՐԳԵԱՆԻ

(Կուլիւր, Վորոնցովի արձանի հանդէպ)
ա մ ե ն օ Ր, բ ա ջ ի կ ի ռ ա կ ի օ Ր ե Ր ի ջ:

Ա Ռ Ա Ռ Ց Ն Ե Ր Ը

Բ. Ս. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաւորու-
թեան, վերական (սիֆիլիս) եւ միզապեղ. հիւանդ.

Կ. Մ. Զիլիովսկի—9—10 ժ. աչքի, ներքին եւ
ներքին շարժումներ:

Կ. Մ. Գոգիլի—12—1 ժ. ականջի, քթի եւ կո-
կորդի:

Զ. Բ. Բարանսկեան—11—12 ժ. կանանց եւ երե-
խացի հիւանդ.

Ս. Պ. Կարապետեան—1—1/2 ժ. ներքին եւ երե-
խացի:

Ե Ր Ե Վ Ո Ն Ե Ր Ը

Ն. Ն. Ռուսսովսկի—6—7 ժ. վիրաւորութեան եւ
մորթում:

Պ. Ս. Թաւրաւով—7—8 ժ. ներքին եւ երե-
խացի: ծաղիկի կարմուխը նշույն եւ կիրակի, առա-
ւօտեան ժամի 9—10.

Բ. Ս. Նաւասարդեան—7 1/2—8 ժ.

Վճար 50 կ. չքաղաքները ձրի համալսարանի (Կոն-
սերվատի) եւ օպերայի համար տառնալին:

Պ. Ս. Առաքելովսկի—տանը, ծաղիկահատ եւ բժշ-
կական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժօկապետ ՆԱԻՍԱՐԳԵԱՆ

ՈՒՍԱՆՈՂ-ԲԺԻՇԿ

ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՄՈՒՐՁԱ

Ընդունում է գերմաներէն լեզուն չիմացող
հիւանդներին՝ ն ե Ր կ ա յ ա ջ ն ե լ ու ն ր ա ն ջ
պ ռ օ ֆ է ս օ Ր ն ե Ր ի ն եւ բ ժ շ կ ա կ ա ն
յ ո Ր հ ու Ր ղ ն ե Ր կ ա ղ մ ե լ ու ն: Համաձայն
է յուլիսի 15-ից ճանապարհորդել գերմանական
կուրորսները:

Հասցէ՝ Berlin, Auguststrasse 93. Cand.

med. Peter Kara-Murza. (ռ. ե.) 6—8

Թախանազին խնդրում եւ Ռուսաստանի
եւ արտասահմանի հայերին ու յայտնի
է Ալեքսանդրովից արդէն մի տարի անցաւ
հեռացած Արշակ Հաջիբեյեան Կարա-
պետեանցի բնակութեան տեղը կամ ով
նրա մասին որ եւ տեղեկութիւն ունի՝ յայտ-
նէ հետեւեալ հասցէով:

Թիֆլիս, редакция «Мшакъ», Аршалуису

Мхитаряницъ. 9—12 Յարութիւն Կարապետեանց

ԲԺԻՇԿ Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Ամսիս 16-ին մեկնեց կովկասեան հան-
քային ջրերը, որտեղ, նախկին տարիների պէս,
կընդունէ հիւանդներին:
Հասցէ՝ Пятигорскъ, Верхній бульваръ,
д. Карповой. 11—15

ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՄՈՒՐՁԱ

Ամսիս 16-ին մեկնեց կովկասեան հան-
քային ջրերը, որտեղ, նախկին տարիների պէս,
կընդունէ հիւանդներին:

Հասցէ՝ Пятигорскъ, Верхній бульваръ,
д. Карповой. 11—15

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլ-
աւութեամբ: Մեծ արկղիկը 5 րուրի, փոք-
րը—3 ր. եւ 1 ր. 50 կ.:



ՆՈՐ ՄԻՋՈՑ

ժողովրդական բժշկական և ամբուլանսի համար,
ոչնչացնում է թեփը, Դուրս է եկել նաեւ
բոլորովին նոր միջոց

ՁՈՒՒ ԿԱՐԸ

Երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն
տալու համար, ոչնչացնում է արեւի պատ-
ճառած սեւութիւնը, մուկները, տալիս է կա-
շտին քնքշութիւն եւ սպիտակութիւն: Այդ
գինը չափաւոր են. մեծ սրտակը, արկղի-
կի մէջ, 2 րուրի, փոքրը—1 ր. 50 կ.
Մալվում են բոլոր պարֆիւմերական եւ
ղեղարվածաւոր խանութներում: Դիլա-
ւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում,
Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակա-
րան № 12. պահեստի բաժանմունքները
գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դե-
ղատան ապրանքների վաճառման ընկերու-
թեան խանութում՝ Մրեւանեան հրապարակ
եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փո-
ղոց եւ Բազում. նաեւ Միքայէլեան կա-
մուրջի վրա, Պապովի եւ Արխանգելովի դե-
ղատներում: Օտարաքաղաքացիների պա-
տուէրները կատարվում են անմիջապէս՝
պօստով: 20—100

УЧИТЕЛЬ
выбжаает на дачу и желаетъ взять съ со-
бою 2--3 мальчиковъ съ подготовкой.
Графская ул., № 10, д. Элизова.
(ռ. կ. ե. հ.) 1—4

Մեծ-Ղարաքիլիսայի կայսրանում պարապում
եւ կոմիտիոններում զանազան տեսակ
պարանքներ տեղափոխելու: Պատուէրները կա-
տարվում են ճշգրտութեամբ:
Դիմել՝ Բ. Կարակիս, Араму Матиянцъ.
1—5



ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են հետեւեալ գրքերը

«Պատկերներ», Անդրոնանի, գիրք 1	1 ր. — կ.
«Որոշում», օգնութիւն հայ որդիներ, պատկերազարդ «Բազմապէս»	1 — »
«Գեղունի», պատկերազարդ թերթ	1 — »
Ալբում, Պարիզի տեսարաններից	20 — »
Ալբում, 1900 թ. ջուրհանդէսի տեսարաններ	20 — »
Ալբում, փոքր դրքով, Պարիզի եւ 1900 թ. ջուրհանդէսի տեսարաններ	4 — »
«Մի խմբի», «Վատ ցաւ» գրքի ջուրհանդէսի տեսարաններ	— » 86
Ալբում երկաթի, Բ. Այվազյանի	1 — »
«Հիւանդի Արժեք», Բ. Այվազյանի	1 — »
«Հին ցաւ», Լեւ. Սարգսեանի	— » 30
Այլ թերթացի Հայաստանին, Լ. Սարգսեանի	— » 60
«Ժողովրդի կրթութեան գործը մեզանում», Լ. Սարգսեանի	— » 20
«Կոռւածագիր», Պ. Պոչեպանի	1 — » 30
«Հեղինէ», Ի եւ Ս. Սաւ, տ. Սաւիտեանի	1 — » 75
«Կովկասի հայը եւ հայոց կաթողիկոսութիւնը», Ա. Երիցեանի	4 — »
«Բանաստեղծութիւններ», Պ. Դուրեանի	— » 20
«Խառնայի Մէլիքութիւնները», Բաֆֆի	2 — »
«Պաշտօնի յիշատակարանը»	2 — » 50
«Մարիանա», Թարգմ. Արս. Կրասիլնիկեանի	1 — »
«Կերակուր պատրաստելու ձեւեր», Թ. Ա.	— » 40

եւ այլ ամեն տեսակ գրքեր:

Դիմել՝ Թիֆլիս. Книжный магазинъ „Гуттенбергъ“ (Лорисъ-Меликовская улица, №

11), Г. Галустану.

Գ. Լ. ԿՈՒՉԱՆԵԱՆԻ ՊԱՆՏՈՆԸ

Յունիսի 10-ին տեղափոխվում է Բորժոմ ամառանոցը: Ցանկացողները իրանց որդիներին ու-
ղարկել, կարող են դիմել մինչեւ յունիսի 7-ը, իսկ յետոյ պայմանների մասին տեղեկանալ
դպրոցում: Պարապմունքները ամառը շարունակվում են: Աշակերտների ընդունելութիւնը ա-
մեն օր: Бебутовская ул., № 50. 6—6

ԲՐՈՎԱՐԵՆԸ
„ՊԵՏՐՈՂ“ (Հեղ.Ուկ)
մազերի տաճարային համար:
(ՍԱՊՈՆ) „ՊԵՏՐՈՂ“
(20) Մազերի թեփը ոչնչացնելու համար: 4—10

Կ Օ Ն Ֆ Ե Կ տ ի ե ռ շ Օ Կ Օ Ղ ա դ ի գ ո Ր Ժ ա Ր ա Ն

„Փ. Ն. ՓՐԻԳՈՆԵԱՆ“ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Յայտնում է, որ իր գործարանում պատրաստվում են շաքարեղէնների ամեն տեսակ ար-
տադրութիւններ, որոնք թէ իրանց յատկութեամբ, մաքրութեամբ եւ թէ մատչելի գներով
մրցում են Ռուսաստանի առաջնակարգ գործարանների արտադրութիւնների հետ:

Պատրաստում են՝ կարամէլ արդեղէնի (фруктовая карамель), կարամէլիցված (с начинкою)
մարմէլադ (пастила), զեֆիր (зефир), դրած (драже), փրփու-շաքար (пузырьковый сахар), леденец:

Գործարանում աշխատում են հմուտ վարպետներ՝ մայրաքաղաքից հրաւիրված յայտնի
վարպետի հակողութեան տակ:

Պատուէրները կատարվում են անմիջապէս եւ ճշգրտութեամբ:

Պրէյս-կուրանտը ուղարկվում է ցանկացողներին ձրի:

Պատուէրների համար դիմել՝ Թիֆլիս, Нахаловка, Павловская улица, собственный

домъ, № 12.

Թիֆլիսում մեր գործարանի արտադրութիւնները ծախվում են հետեւեալ մագազիննե-
րում—Գ. Բայեանդուրեանի, Գ. Ս. Տէր-Սիմոնեանի, Զ. Ի. Սուլիսեանի, Զ. Պ. Պոպովի, Ե. Զ. Ս. Ի. Մ. Աբրահամովի եւ Զ. Զ. Սեւեդինի
պարսկական մագազինում, Պ ե տ Ր օ ի խալիկան մագազինում եւ այլն: Տեղեֆոն № 362:

29—100